Հակոբ Մանուկյան
Գլխավոր տնօրեն

Հակոբ Մանուկյանը ծնվել է 1988 թվականին, Երևանում:

2010 թվականին ավարտել է Գ.Վ. Պլեխանովի անվան ռուսական տնտեսագիտական ակադեմիան ՝ ստանալով ինժեներ-տնտեսագետի որակավորում:

2013 թվականին ավարտել է Հայ-Ռուսական համալսարանի Ասպիրանտուրայի բաժինը՝ ստանալով Տնտեսագիտական գիտությունների թեկնածուի կոչում:

2022 թվականից սովորում է Յորքի և Ստրասբուրգի համալսարանում՝ Master of Business Administration (MBA) որակավորմամբ:

2010-2011 թթ-ներին աշխատել է «ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ-ում՝ որպես վարկային մասնագետ:

2011-2013 թթ-ներին աշխատել է «ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ-ում՝ որպես Գործարքների կառուցվածքայնության բաժնի ավագ մասնագետ, 2013 թ. հունիսից՝ որպես նույն բաժնի գլխավոր մասնագետ:

2013-2017 թթ-ներին աշխատել է «Արդշինբանկ» ՓԲԸ-ում՝ որպես Մոնիթորինգի բաժնի պետ:

2017-2018 թթ-ներին աշխատել է «Մոգո» ՈՒՎԿ ՍՊԸ -ում՝ որպես Հաճախորդների սպասարկման վարչության պետ:

2018-2019 թթ-ներին աշխատել է «Մոգո» ՈՒՎԿ ՍՊԸ -ում՝ որպես Գործառնական տնօրեն:

2019-2020 թթ-ներին աշխատել է «Մոգո» ՈՒՎԿ ՍՊԸ -ում՝ Գլխավոր տնօրենի տեղակալ-գործառնական տնօրեն:

2020թ. դեկտեմբերից մինչ օրս զբաղեցնում է «Մոգո» ՈՒՎԿ ՍՊԸ Գլխավոր տնօրենի պաշտոնը: